

ջնս գրել էր Սուրմէն ստրատելատին: Կոյն յօդուածում Հ. Ակինեանը մատնացոյց էր արել, որ լացի Վրթանէս քերթողից “Ընդդէմ հերձուածոց” հայերէն թարգմանութիւնից օգտուել է նաեւ վեցերորդ դարի հեղինակ “Յոհան Կարոնյ քաղաքացին”: Հ. Ակինեանի վերցիշեալ եղակացութիւնները հիմնարուած են փաստական ապացոյցներով եւ խիստ կարեւոր էին այն տեսակէտից, որ Խրենէսոսի թարգմանութեան ժամանակն իջեցնում էին վեցերորդ դար: Սակայն անհաւանական էր Հ. Ակինեանի մի ուրիշնթագրութիւնը, իբր թէ Խրենէսոսի թարգմանին է Վրթանէս քերթողը եւ որ թարգմանութիւնը կատարուած է վեցերորդ դարի վերջին տասնամեակին: Այս ենթագրութիւնը, աւելի ճիշտ գուշակութիւնը, որ հիմնարուած չէ բաւարար ու գոհացուցիչ ապացոյցներով, կարելի է այժմ անտես առնել, որովհետեւ Խրենէսոսի թարգմանութեան ժամանակը, հնագէս կը տեսնենք, զրուելու է վեցերորդ դարի երկրորդ կիսից առաջ:

Վերջիշեալ յօդուածներում Խրենէսոսի թարգմանութեան խնդիրը թւում է ինձ մեծ չափով պարզուած: Գր. Կոնիբիրի ու Հ. Վարդանեանի լեզուական լուրջ ու հիմնարոր դիտութիւններից յետոյ՝ պէտք է վերջնականապէս ապացուցուած համարել, որ Խրենէսոսի հայերէն թարգմանութիւնները ժամանակակից են Փիլոնի թարգմանութիւններին: Խրենէսոսի “Ընդդէմ հերձուածոց” թարգմանութիւնից օգտուել են, ինչպէս ցոյց է տուել Հ. Ակինեանը, Վրթանէս քերթողը եւ Յոհան Կարոնյ քաղաքացին: Կարեւոր այս վկայութիւնը դարձեալ աներկուայելի մի նոր ապացոյց է, որ Խրենէսոսի թարգմանութիւնները շատ աւելի հին են, քան կարծել էին հրատարակիչներն իրանց առաջարանում:

Աչքի առաջ ունենալով այս ակներեւ եղակացութիւնները, նաեւ յունաբան գպրոցի յաշորդական զարգացման այն ընթացքը, որ լուսաբանուած է սոյն իմ ուսումնասիրութեան մէջ, կարծում եմ, որ Խրենէսոսի թարգմանութիւնների ժամանակը հնարաւոր է որոշել աւելի ճշգրիտ կերպով, քան այդ արուած է վերջիշեալ յօդուածներում:

ՊՐՈՊ. Յ. ՄԱՆՅԱԴՅԱՆ  
(Եպոնականի):

Էջմիածնի ՄԱՏԵՆԱԳՐԱԲՆԵՐԻ ԻՄԱՍՏԱ-  
ՄԻՐԱԿԱՆ ՀՆԱԳՈՑՆ ԶԵՄԱԳԻՐՆԵՐԸ

(Շարունակութիւն:)

թ. 1884, 8 էջ. մատեն. = Մայր Յուցակ,

թ. 184?:

Թուղթք՝ 116: — Գրութիւն՝  $13 \times 8,5$   
սմ.: — Տողք՝ 19—24: — Նիւթ՝ ողորկ  
հաստ թուղթ: — Գիր՝ հին բոլորգիր վեր-  
նագրերն ու սկզբնատողերը կարմիր թանա-  
քով: — Լուսանցաղարդք՝ լուսանցաղատ-  
կերներ սկզբնատողերին կից: — Կազմ՝ կա-  
շևատ տախտակ: — Հանդամանք՝ ձե-  
ռաղիրս խիստ վնասուած է եղել. Ժի դա-  
րում նորոգած Մեսրոպ սարկաւագի ձեռ-  
քով: Նորոգուած թերթեր 1—6 եւ 13—19,  
որոնց վրայ Մեսրոպ սարկաւագը լրացրել  
է ձեռաղիրս թերակատար մասերը: Սկիզբէն  
եւ վերջն դասարկ թերթեր: — Նորոգման  
թուականը՝ ՌՃԶԴ=1733: — Նորոգման  
տեղը՝ իջմիածին: — Գրիչ՝ Յովհաննէս: —  
Ստացաւղ՝ Ստեփաննոս Քահանայ: — Թուա-  
կան՝ չունի, ըստ Երեւոյթին՝ ԺԴ—ԺԵ դար:  
Բովանդակութիւն.

1. Հին Զուղայեցի Ստեփաննոս վրդպակ  
յաշակերտէն առ Դաւիթ անյաղթ փիլիսո-  
փայն Հայոց (տաղ): Զեռաղրի սկզբում.  
Էջերը չեն դրուած:

Սկիզբն է. Ի յարմատոց բղխեալ ուշեղ  
գեղազարդ.

Հարանց մեծաց եւ երջանկաց մաքրա-  
զարդ:

Վերջ.

Սուրբ Երջանիկ հայրու աղաչեմք բարձրա-  
ձայն,

Բարիկիսաւեալ առ մարմնացեալ մեծ արքայն,  
Յորժամ հընչէ փողն տհագին մեծաձայն,  
դամել լրզեղ ուղղափառացն ամենայն:

2. էջ 1 ա—109 ր. Դաւիթի փիլիսոփայի  
Ներքինացւոյ, Յաղագս սահմանց [պրակք  
Արքի]:

Լուսանցքների վրայ մեկնութիւններ  
յիտնագոյն ժամանակի: Սկիզբն է (էջ 1ա).  
Արք միանգամ իմաստութեան տեսչան բա-  
նից, առ ի նմանէն հեշտութեանց եւն:

Վերջ. Արք՝ զգիտական զաւրութիւնն  
զարդարէ ի ձեռն տեսականին, իսկ զկենդա-

նականսն ի ձեռն գործականին, որպէս զի մի՛ զուտ գիտութիւն ի կարծեաց ընկալ-  
ցուք եւ մի՛ չար ինչ գործեսցուք:

**Մի տող քերուած եւ ապա՝**

Դաւթի մեծի եւ անյաղթ փիլիսոփայի  
ընդդէմ առարկութեանցն չորից Պիհունի  
խմաստակի եւ սահմանք եւ տրամատութիք  
խմաստասիրութեան:

3. Էջ 109 բ—110 բ. Ամենայն չար տան-  
չելի. ոչ ոք տանջեալ անապական. ոչ ոք  
ապականացու անեղ. է չարն ապականացու,  
չար ուրեմն ոչ է անեղ եւն:

**Վերջ (110 բ).** Եւ ընդ բամբասանաւք է  
սատանայ. ապա ուրեմն՝ ոչ է անեղ:

Յիշատակագրութիւն:

1. Էջ 110 բ. Սահմանք խմաստասիրու-  
թեան երկի վերջում, հին բոլորդիր նոյն  
դրչէ.

Փառք ամենասր երրորդութեանն որոց  
մի է ածութիւնն եւ բնութիւն յաւիտեանս:

Զտէր Ստիոս զատացաւղ գորոց մի մո-  
ռանայք որք վայելէք եւ արդիւնիք ի սմանէ.  
զի վն այդմ յուսոյ էր ստացեալ զսա: Բնդ  
նմին եւ զանդիտանս Յոհան, զի բզում աշ-  
խատեցայ ի յուղղութիւր:

2. Էջ 111 ար, ձեռադրի վերջում, նօտր  
դրով Մեսրոպ սարկաւագի յիշատակագրու-  
թիւնը.

Ես նոււաստ եւ անպիտանս ամենայնի,  
Մեսրոպ սուտ անոււամք սարկաւագ, որ ոչ  
առնեն արժանի զիս մեղօք մածեալս աշ-  
կերտութիւ այսպիսի խմաստից, այլ ակնկա-  
լութիւնն իմ ոչ եթէ երկաւորիս էր, բայց  
միայն բանն տէրունեան թէ «Մի կոչէք եր-  
կրի ձեզ ուսուցիչս, այլ ուսուցիչն ձեր  
թու է»: Քանզի իմ նայելով զայս գիրքս սահ-  
մանացն Դաւթի՝ յըրուեալ կայր իրը ան-  
պիտան, եւ ես բազում աշխատանօք իրար  
ձգեցի եւ պական գրեցի սակա վայելման  
անձին իմոյ:

Արդ՝ աղաչեմ զձեղ, ո՞վ սիրազուն եղ-  
րարք իմ, որք հանդիպիք սմա թէ ընթեռն-  
լով, թէ օրինակելով՝ միոյ Հայր մերոյիւ-  
վերոյ գրեցեալ զանտոհմս եւ հեղս յիշեցէք.  
եւ զուք յիշեալ լիջիք ի թէ կրկնակի գալ-  
ստեանն եւ աշխարհական տուեանն, ամէն:  
Գրեցաւ ՌՃԶԲ թւին Հայոց, ապրիլի ամսոյ  
ը ի Դրան մեծի վեհարանիս սր էջմիածնի:

3. Ձեռագրի սկզբում, զատարկ երես-

ներից մէկի վրայ ներքեւում, նօտր դրով  
օտար դրչէ.

Յամի Տն 1761, Հայոց ՈՒԺ, զգիրս  
զայս ըստացյ ի վայելումն յարեւեցի Ղա-  
ղար անիմաստ վրդպափս, ամէն: Որքան  
հանդիպիք եւ ընդեռնուք՝ ասասջիք Տր ո-  
դորմի: Նոյեմբերի ժ գրեցաւ, պատրաստա-  
կան ծառայ եմ ամենից:

Թ. 1825, 6 Էջմ. մատեն. = Մայր Յուցակ,

Թ. 1782:

Թուղթք՝ 292: — Գրութիւն՝  $14 \times 10$   
սմ: — Տողք՝ 26: — Նիւթ՝ հաստ ողորի  
թուղթ: — Գիր՝ բոլորգիր. վերնազրելն ու  
սկզբնատառելը կարմիր թանաքով: —  
Լուսանցազրդք՝ Էջ 2 ար, 55 ար, 67 ար, 129 ար,  
212 ար, 247 բ, 289 բ խորաններ, լուսանցք-  
ների վրայ զարդանկարներ: — Կազմ՝ կա-  
շեպատ տախտակ. կազմի վրայ կապիչների  
հետքեր: — Մագաղաթեայ պահպանակ՝  
սկզբէն ու վերջն երկ-երկու թերթ: Զե-  
ռագրի վերջում մագաղաթեայ թերթերը  
պարունակում են երկաթագիր մի հատուած՝  
«Երանելոյն Յովհաննու Ուկերերանի կոս-  
տանդնուպաւզուի Եպիսկոպոսի ի Մատթէոսի  
աւետարանէն»: — Հանդամանք՝ լաւ: —  
Թուական՝ չունի, լստ երեւոյթին՝ ԺԴ-  
ԺԵ դար: — Տեղ՝ «Ընդ հովանեաւ մօրու-  
լուսոյ Ածածնիս որ կոչի Աւագ անապատ եւ  
սքանչելագործ սր Նշանիշ»: — Գրիչ՝ Ստե-  
փանոս:

Բովանդակութիւն.

1. Էջ 1 ա. Դաւթիթ աղգաւ հայ էր եւ  
Հայոց աշխարհէն եւ ուսաւ զգիրս Յունաց  
եւ վարժեցաւ. ապա անդ սիրեցաւ ի թա-  
գաւորէն իւր ընկերաւաքն եւ առաքեցան  
յԱթէնս ի մայրն իմաստութեան եւ ուսան  
դամենայն իմաստասիրութիւնն: Եւ եկն յաշ-  
իսարհն իւր նա զէտ ի ժամանակս մարգա-  
րէիցն յարեան սուտ մարգարէքն նմանապէջ  
ի ժամանակս առաքելոցն սուտ առաքեալով  
նաև ի ժամանակս իմաստասիրացն սուտ  
իմաստունքն յարեան եւ հակառակէին ընտ  
ճշմարիտ իմաստասիրութիւնն: Յորոց իւ  
մի էր Պիհուն որ իւրաեաւքն հակառակէից  
եւ առէր թէ ոչ է իմաստութիւնն: Յազար  
այսորիկ հանդիսանա մեծ իմաստաէրն դար-  
ւիթ եւ ցուցանէ իմաստասիրական յեղանաւ

կաւ թէ է իմաստասիրութիւն եւ որպէս ամենայն էքս որ էացեալ են յԱստուծոյ թէ կենդանի թէ անկենդան թէ բանական թէ անըստան ամենեքեան սահման ունեն եւ առանց սահմանի ոչ գտանի էութիւն նա ցուցանէ եւ իմաստութեանն սահման ապա յառաջադոյն դայն կամի ռւսուցանել:

2. էջ 2 ա—54 ա. Սահմանք իմաստասիրութեան (պրակք Ա.—իԱ.):

Վերջ (էջ 54 ա). Դաւթի եռամեծի եւ անյաղթ փիլիսոփայի ընդդէմ չորից առարկութեցն Պիհոսնի իմաստակի եւ սահմանք եւ տրամատութի իմաստասիրութե մինչեւ ցայս վայր:

3. էջ 54 ա—բ. Ընդ այսոսիկ եւ առաջիկա բան իմաստանոյս: Ամենայն չար տանշելի ոչ ոք տանջեալ անապական...:

Վերջ (54 բ). Եւ ընդ բամբասանաւք է սատանայ ապա ուրեմն ոչ է անեղ:

Այս զծածք հանդիսադիր իմբից առաջնոցն տառից տրամախոհ իմաստասէր մակացու արանց ներբողեալ ի Դւթէ եռամեծէ ենթադրեցաւ.

Ապա հետեւեալ ծանօթութիւնը.

ԶՊորփիւրի նախերդանն ի մեկընչին ի ճառն տես:

4. էջ 55 ա—66 բ. Ներածութի Պորփիւրի:

5. էջ 67 ա—128 ա. Դաւթի փիլիսոփայի Ներպինացւոյ, Վերլուծութի Ներածութեանն Պորփիւրի (պրակք Ա.—իԹ+Յաղաղս հանրականաց սեռից եւ տարբերութեց...):

6. էջ 128 ա. — ա. Կատաղօրիսաս, թ. իպեսիամենիսաս, գ. Անալուտիկի, դ. Ապօղեկեկի, ե. Դիալիֆտիկի, ա. Ստորառութի<sup>(\*)</sup>, թ. Յղզս մեկնութի, գ. Վերլուծական, դ. Ապացուցական, ե. Շարաբանթի, գ. Կատաֆասիս, կ. Ապաւֆանսէն, դ. Ապօֆասիս, թ. Պրոֆասիս, գ. Ստորառութի, է. Բացասութի, լ. Բացերեւական, թ. Նախադասութիւն:

7. էջ 129 ա—211 բ. — Ստորոգութիք Արիստոտէլի ժ բան<sup>1</sup>:

Լուցանց քների վրայ ծանօթութիւններ ու բացատրութիւններ, մեծ մասամբ, տարբեր գրչէ:

Վերջ (էջ 211 բ). — Կատարեցաւ սկսեալս ի մէնջ գրել ժ ստորոգութան ասա-

ցեալ յեռամեծէն յԱրիստոտէլի որ ասի ըստ յունարէն ձայնի Կատաղօրիսա, թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ Ներպինացւոյ:

8. էջ 212 ա—274 ա. — Սկիզբն եւ նախաղրութի գրոցն որ ասի ըստ յունաց Պերիարմենիսա եւ Հայերէն Յղզս մեկնութեարտաղրեալ ի մեծ իմաստանոյն Արիստոտէլի եւ թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ:

9. էջ 274 բ—289 ա. — Արիստոտէլի իմաստասիրի թուփիթ առ Աղեկսանդր թագուոր, Պատմութի յաղագս աշխարհի:

10: էջ 289 բ—292 ա. — Արիստոտէլի, Յաղագս առաքինութեց առ Աղեկսանդրոս թագուոր:

Յիշատակագրութիւնք.

1. էջ 128 ա. Պորփիւրի Ներածութեան մեկնութեան վերջում, նոյն գրչէ.

Փառք երբեակ անձին եւ միակ բնութեն յընդհանուր սեռից եւ տեսակաց, ստորնայնոց եւ գերակայից, անտեսակին տեսակաց եւ բարձրակատար տեսակին, որ ետ կարողութիւն հասանել յաւարտ իմաստասիրական տառիս այժմ եւ յանհուն յաւիտեանս ամէն:

2. էջ 173 բ, նոյն գրչէ.

Զգծողս յիշեալ:

3. էջ 211 բ. Ստորոգութեանց մեկնութեան վերջում, նոյն գրչէ.

Որ ոք հանդիպիք սմա ոպ զիարդ եւ իցէ թողութի մեղաց եւ ողորմութի ի Քէ Հայցէք աւրինակի տևողին եւ գրողին եւ տկարգրութիւն մեղապարտի Ստեփի եւ բուն թարգմանողի սորա եւ մեկնողի եւ առատատուրն պարզեւաց Քս լի սրախւ յիշողացդ եւ յիշեցոց ողորմեսցի եւ որ ամէն ասէ եւ Քի Այժերոյ վիառք ընդ Հօր եւ ոք Հոգւոյն յաւիտեանս յաւիտեանից ամէն:

4. էջ 274 ա. Աըրէ քրօմ ռէւաս Կրկի մեկնութեան վերջում, նոյն գրչէ.

Խիստ նեղացա՝ աղաչեմ չմեղագրել լուն ու ճանձն լափի:

5. էջ 292 ա—բ, ճեռագրի վերջում, գլխաւոր յիշատակարան նոյն գրչէ.

Փառք ամենասր Երբորգութեն Հաւր եւ Ռիգույ եւ Հոգւոյն Արբոյ: Փառք Հաւրն առ նկի, անհասի, անբախի եւ էացուցչի ամի:

նկի, անհասի, անբախի եւ էացուցչի ամի:

Փառք որդւոյ ծնելոյ եւ երեւոյ<sup>(\*)</sup> եւ ընդ Փառք որդւոյ ծնելոյ վիւրայինոն ա: Փառք եւ իւր յարուցանելոյ վիւրայինոն ա:

<sup>1</sup> աւ բանն այլ գրչէ:

նուշաբուրիչ սր Հոգւոյն: Փառք երեքերեւան երրորդական Ածութեն եւ անբաժանելի միւռթեն այժմ եւ միշտ զի յորմէ եւ նովաւ եւ ի նոյն անմա փառք յաւիտ ամէն:

Արդ ես մեղաւոր հողս փծուն դրիչ Ստեփան. առ ոտս ձեր անկեալ աղաչեմ որք հանդիպիք սմա թողութիւ արարէք ինձ վս սղալանացս որ ի սմա զի այսափ էր կարմեր: Բայց զրեցի զսա յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ ա զարմից ի լաւ եւ յընտիր աւրինակէ:

Արդ որք աւգտեալ ի սմանէ շահեսցին յիշատակեսցեն առաջի զենլոյն Քի... եւ զրարունապետն Գրիգոր որ զաւրինակն չնորդեաց եւ զամբարեալ իմաստութիւ մտաց իւրոց քաղցրութիւ եւ հեղաւրէն արբուցանէ սպասաւորացն բանի զոր տացէ նմա Աստուած զտրիտուր փոխարինին նաև եւ ըդգէորդ վանական քհնայ որ զօրինակն վզնիւր հոյն<sup>(\*)</sup> երետ. յիշենջիք եւ զկուսակաւն քհն Հայրապետ որ աւգնական եղեւ մեղ ի թղթիս կոկելն: Այլ եւ զհամաւրէն համշիրակ եղբարքս, որք կան յընթերցումն Ածեղէն տառից եւ իմաստութիւ առ ոտս պատուական հանճարայեղց բարունապետիս Գրիգորի եւ աւգնական եղեն մեղ ի յուղելն զսա: Եւ զտառապեալ անձն իմ զմեղսաներկ զնախասեալ գրողս եւ ծնօղսն իմ աղաչեմ յիշել եւ զամենեսեան որ աւգնական եղեն յիշել ի գրելն սորա նաեւ զառաջին իմաստամէղ ի գրելն սորա նաեւ զառաջին իմաստամէղ վարդապետ որ բաղում աշխատեցան իսա:

Արդ զրեցաւ սա ընդ հովանեաւ մօրս լուսոյ Ածածնիս որ կոչի Աւագ անապատ եւ սքանչելազործ որ Նշանիս:

Թ. 1894, 18 Էջ. մատեն. == Մայր Յուցակ  
թ. 1852:

Թուղթք՝ 326: — Գրութիւն՝  $12 \times 8$  եւ  
 $13 \times 9$  սմ.: — Տողք՝ 24—29: — Նիւթ՝  
հաստ ողորկ թուղթ: — Գիր՝ բոլորդիր.  
վերնազրերն ու սկզբնատառերը կարմիր  
թանաքով: — Կաղմ՝ կաշեպատ տախտակ: —  
Հանդամանք՝ բաւարար: — Թուական՝  
չունի, ըստ երեւոյթին ժե—ժօ դար: —  
Գրիչ՝ Գրիգոր եւ Տրիտուր:

Բովանդակութիւն.

1. Էջ 2թ. — Ցանկն է վասն այս արտաքին գրքիս այսթիկ:

Նօտր գրով օտար գրչէ:

2. Էջ 3ա—51թ. — Սահմանք իմաստափութեն: Սոյն վերնազիրը յետոյ ուղղուած է օտար գրչէ այսպէս. Դաւթի փիւլուովայի Ներգինացւոյ յղու Սահմանց իմաստափութեն (պրակք Ա.—ԻԱ.):

Սկիզբն է (Էջ 3ա). — Որք միանդամ իմաստափութեն տենչան բանից եւ առ ի նմանէ հեշտութեց ծայրիւ միայն մատին հանդիպին ճաշակեալք...: Վերջ (Էջ 51թ.).

— Որպ զի մի՛ զուտ գիտութիւ ի կարծեաց ընկալցուք զի մի չար ինչ գործեսցուք: Դաւթի եռամեծի եւ անյաղթ փիլսովայի ընդգէմ չորից առարկութեցն Պիհոռնի իմաստակի եւ սահմանք եւ տրամատութիւ իմաստափութեն մինչեւ ցայս վայր:

3. Էջ 51թ—52ա. Ընդ այսոսիկ եւ առաջիկա բան իմաստանոյ: Ամ չար տանջելի: ոչ ոք տանջեալ անապական: ոչ ոք ապականացու անեղ...:

Վերջ (Էջ 52ա). — Եւ ը բամբասահաւք է ստից, ապ ւր ո՛չ է անեղ:

4. Էջ 53ա—63թ. — Ներածութիւ Պորփիւրի:

5. Էջ 63թ—120թ. — Դաւթի փիլիսովայի Ներգինացւոյ, Վերլուծութիւ Ներածութեն Պորփիւրի: (Պրակք Ա.—ԻԹ + Յղու հասարակաց սեուից եւ տարբերութեց առջև տեսութիւ):

6. Էջ 121ա—130թ. — Մեկնութիւ բանից Դաւթի փիլիսովայի, որ ի կատարումն նորին տառիւ որ վս սհմնաց իմաստառութեն, ասացեալ Տն Ներսիսի Կթիկի Հայոց ի ինդրոյ ումեմն Ստեփաննոսի սիրողի իմաստութեն:

Սկիզբն է (Էջ 63թ). — Զինդիր Հոռգեւորական հաւատով եւ սիրով հայցողաց սպարտիմք տալ յօժարութիւ ըստ հրամանի Տն...:

Վերջ (Էջ 130թ). — Այլ մեք զի ունիմք զայսոսիկ չնորհեալ յԱյ յառնել ի մեռելութենէ հողոյ խոստովանութիւ եւ արտասուօք՝ զոհութիւ չնորհողին մատուցուք իւ փառք այժմ եւ յաւիտեանս յաւիտեանից ամէն:

7. Էջ 131թ. — Յունարէն իմաստափութիւն չառայօրիս եւ այլ բառերի թարգմանութիւնք օտար գրչէ եւ մի հատուած՝ «Զինչ է պատճռ ուղղաձեւ զոլոյ մղոյ»...:

ա. Կատալորիսս. Իպեռիամէնիսս. Անալօսիկի. Ալոդիկտիկի. Դիալֆտիկի: Կատալորիսս. Իպեռիամէնիսս. Անալօտիկի. Ալոդիկտիկի. Ստորոգութիք. Յաղդ մեկնութե. Վերլուծական. Ապացուցական. Դիալֆտիկի. Կատաֆասխ. Ապովասէս. Ապովանսէս. Պրոտասիս]. Շարաբանութի. Ստորասութի. Բացասութի. Բացերեւական. Նիսդութի. :

բ. Զի՞նչ է պատճո ուղղաձեւ գոլոյ մդոյս. Ի՞ոլ տարակոյս երիւք լուծանի՞ կմ գրոց վկութը կմ բնական քննութը կ մտաց տեսութր: Դիրք ասէ թէ ուղիղ է Տը Ած մեր եւս եւ թէ արար Ած զմդն ի պատկեր իւր՝ այսինքն ուղիղ. Եւ ըստ բնականին զի Ի՞ոլ կենդանիքդ անհաւասար ունին զտարերքդ որպ թուչունք զօդոյ մասն առաւել եւ ձկունք՝ զջուր եւ այլք զերկիր, իսկ մտ հաւասար ըստ Նիւսացոյն եւ զհրոյ մասն հուզվ քայլոցդ զի նոքա պակաս ունին եւ չուրն վերաշարժ է որ միշտ ի վեր կու ձդը-տեցնէ եւ ուղիղ կազմէ ընդ իւր զայլ տարերդ: Իսկ ըստ տեսութե զի որպ կազմար որ զինչեւէ նիւթ ի վր իւր ձեւոյն կու կերպացնէ որպ եւ ինքն է նմանապ հոգին բանական որպ կազմար է եւ զինիթ մրենն ի յարգանդ մօրն ի վր իւր կու անձնաւորէ ու տպացնէ որպ տեսանեսդ ուղղակի եւ ի վրչայից. Եւ օրինակ քեզ որ զինչ ախտ որ կրէ հոգին որ է կազմար նա կու ցուցանէ ի տրմինն որպ տրոտմութի, բկութի, հպարթի, ցանկութի:

8. Էջ 132 ա—217 ա. — Ստորոգութիք Արիստոտէլէ (մեկնութիւն):

Սկիզբն մեկնութեան (Էջ 132 ա) .— Հո-մանունութի մինի ըստ երկու յեղանակո ըստ պատահման կամ մտածութի. մտածութի ըստ պատույ, ըստ յիշատակի, ըստ յու-սոյ, ըստ աղօթից, ըստ կերպարանի, ըստ նմանութե:

Վերջ (Էջ 217 ա). — Քդի էր սահման սերին որպ ասացաւ զյուղից եւ զտարե-րեցելոց տեսակաւ ի ներումզինչն ստորո-դեալ: Կատարեցաւ ոկտեալս ի մինչ գրել տասն ստորոգութիսն ասացեալ յեռամեծէն Արիստոտէլէ, որ ասի ըստ յունարէն ձայնի կատելորիսս, թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ Ներգինացւոյ:

9. Էջ 217 ա—280 ա. — Սկիզբն եւ նա-ևառութի գրոցն որ ասի ըստ Յունաց Պե-

րիալմէնիսս եւ Հայերէն Յղգս մեկնութե:

Արտագրեալ ի մեծ իմաստնոյն Արիստո-տէլէ, թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթէ:

Սկիզբն մեկնութեան (Էջ 217 ա). — Ճառեցաւ մեզ երբեմն, եթէ է ամենայն բա-նական իրողութես այսորիկ ակնկալութի առ ապացուցական շարաբանութիսն հասանել:

Վերջ (Էջ 280 ա). — Քդի ամենայն ու-րեք սովորեց իմաստասէրս յղգս պիտանա-ցին դիտութի սերմանել իւրոց լոոզացն:

10. Էջ 281 ա—297 բ. — Արիստոտէլի իմաստասէրի թուլութ առ Աղէքսանդրոս թա-դաւոր, Պատմութի յղգս աշխարհաց:

11. Էջ 297 բ—301 բ. — Արիստոտէլի, Յղգս առաքինութեց առ Աղէքսանդրոս թա-դաւոր:

12. Էջ 302 ա. — Արիստոտէլս արա-գիրացի էր ի Քամչկիթ գաւառէ եւն (Հմմտ. թ. 1889):

13. Էջ 303 բ. — Որպ յանդիմանեսցէ ի ձէնջ վս մեղաց. գ մեղք են. ա. բնական. բ. մահուչափ. գ. եկական (°) . . . .

Վերջ. — Որպ սա մդէն թէ կամիմ զի ամ մտ կեցցէ եւ ի գիտութի ճշմարտւթե եկեսցէ:

14. Էջ 305 ա—312 բ. — Գիրք ի վեր բնութե հանրական եւ մասնական, քհի ու-ժեմն աշխատել իշաւիս անուն Յէ[սու]:

Սկիզբն է (Էջ 305 ա). — Խնդիր վս բնութե այսպիսի արացուք: Յորժամ գոյա-ցոյց Ած զէս յոչէից՝ տեղի բնակութե կազ-ցեաց զաշխարհ ձեղուամբ երկնից յօրինել:

Վերջ (Էջ 312 բ). — Եւ խելքն ի լ առ մինչեւ ի կ-ն, եւ անտի յառաջ պակա-սիլ սկսանի. եւ քի այ որ առնէ այս ի (°) կարգամք փառք եւ:

Էջ 312 բ. — Նոյնալ եւ այլոց կենդանեաց եւ բնութին զպէտս պատշաճաւորս՝ զազա-նաց եւ թոչնոց, անասնոց եւ սողնոց:

Վերջ (Էջ 313 ա). — Եւ ինչ ոչ զտանի յարաբածս՝ զոր ոչ խնամէ բնութին, ըստ իւրէ իւր պիտոյից եւ զգուշութե:

15. Էջ 313 ա. — Նորին ասացեալ վս Համոց:

Սկիզբն (Էջ 313 ա). — Յայտնի են է. ա. փոթոթն, բ. թթուն, գ. քաղցրն, դ. դառն, ե. աղին, զ. կծուն, է. անլին եւ ան-զամն եւ գերն:

Վերջ (Էջ 313 ա). — Խարտեալ մաղձն պտղզողս տեսանէ եւ հեծեալ:

16. էջ 313 ր—322 ր. — Դաւթի փելիսուփայի, Գիրք էակաց :

Սկիզբն է (էջ 313 ր). — Ի քանիս բաժանի էակն կամ յո՞րս : — Երկակի. ի գոյացութիւն եւ ի պատահումն :

Վերջ (էջ 322 ր). — Եւ այլք այսպիսի դնելի է բան անսահմանի ենթադատելով ձշդակչու :

17. էջ 322 ր—324 ր. — Նկատումն Արիստոտէլի :

Սկիզբ (էջ 322 ր). — Ուսուցանէ մեզ ի բանալսութեցն այնոցիկ, որ հասարակաց բնականաց գոյանան եւն :

Վերջ (էջ 324 ր). — Եւ այսք ըսկը որք ոչ ումեք այլոց արարածոց բնաւորեցաւ պատշաճիլ, բց միայն միայնում Այ, եւ նմա միայն տալ է պաշտօն Քի, եւ նմա փառք յաւիտեանս ամէն :

18. էջ 324 ր—326 ա. — Բնութիւն է գորութիւն հրամանատուի յընթանուր հոգւոյն . . . :

Վերջ (էջ 326 ա). — Զի պատ հանձ ընդբանականութիւնն է, որ է յէութէնէ մղոյն :

19. էջ 326 ր. — Հարցեր ու պատասխաններ իմաստասիրական բովանդակութիւնով : Գրերն աւրուած ու գժուար ընթեռնիւ :

### Յիշատակագրութիւններ

1. էջ 58 ր. բնագրի գրչէ :

Յիշէ զՊրիգոր գրող սորայ :

2. էջ 120 ր. Պորիկիւրի ներածութեան մեկնութեան վերջում, նոյն գրչէ .

Յիշեսիք զմեղ յաղօթս ձեր :

3. էջ 131 ր. Ներսէս Շնորհալու՝ «Ամենայն չար տանջելի» հատուածի մեկնութեան վերջում, նոյն գրչէ .

Յիշ յաղօթս ձեր զմեղուցեալ անձ իմ զՃրիտուրն . Տըն տա որ չափով որ չափէք յոլովիւք առնուցուք զիոխարէնն ամէն :

4. էջ 131 ր. մի քանի տող ներքեւ, տարբեր գրչէ .

2 . . . սարկաւաք յաղօթս լիշէ :

5. էջ 326 ր. ձեռագրի վերջում օտար գրչէ .

Քս Ած ողորմի սր կրողին եւ զնողին եւ կրդացողին եւ ամենայն հւտցելոց կենդանեաց եւ մեռելոց ամէն :

(Վերջ.)

ՊՐՈՓ. Յ. ՄԱՆԱԳՅԱՆ

### ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ

ԱՐԵՍ ԳԵՂԵՑԻԿ ՀՅՄԵՄԱՏԱԿԵԾ ՈՒԹԻԾ  
ՆՄԱՆՈՒԹԻՆԸԿ ԸԹԱՍՊԵԼԵՐՈՒ ՀԵՏ

Թերթիս մէջ բաւական ընդարձակ խօսեցայ ժամանակին թամուղի, Ագոնիսի, Էսմունի Ոսիրիսի եւ Ատափիսի առասպելներու նկատմամբ ծանրանուլով գլխաւորաբար այնպիսի տեսագծերու եւ նկարագրական երեւոյթներու վրայ որոնք կարելի ըլլայ թերեւս Արայի համապատասխան երեւոյթներու հետ աղերսի մէջ գնել չիմայ կը մնայ ինքնին իսկ աս աղերսներու բնորոշումը, որ սակայն քիչ գժուարութիւններու կապուած չէ: Գլխաւոր գժուարութիւնը անէ, որ խնդրոյ նիւթ առասպելները տակաւին իրենք իրենց մէջ ըստ բաւականի նշդուած չեն. ընդհանուր նմանութիւններու հետ ունի նաեւ մանրամասնութիւններ, որոնց մէջ իրալի մէ զգալապէս կը հեռանան: Սյափիսի պարագաներու մէջ բնականաբար գժուար է երեւոյթ մը իրեն համապատասխան երեւոյթներու վիրուճարար կարգել կամ նմանօրինակ առասպելներու մէջ փոխառութեան հարց յարուցանել եւ նաեւ զայն լուծել:

Բարեբախտաբար այս գժուարութիւնները այնչափ ընդհանուր հանգամանք չունին: Այսով գոհացուցիչ կերպով պարզուած է արդէն թամուղի եւ Ագոնիսի մէջ եղած աղերսը. սկզբնականութեան հարցը միայն կը մնայ տակաւին լուծելի, որ ի հարկէ անհշանակ կէտ մը չէ: Գալրձեալ ստոյգ է, որ Ասիրիսի առասպելը իր ներկայի ծերին մէջ, այսինքն՝ ինչ որ Պղուտաբրուէն եւ որիշ յոյն եւ լատին մատենագիրներէ կ'աւանդուի, շատ էական կէտերու մէջ փոխառութիւն է ինքնին իսկ Ագոնիսի առասպելին: Էսմունի նկատմամբ գժուարութիւնը ամենանուազ է: Էսմուն եւ Ագոնիսի փիւնիկէի միեւնոյն առասպելին ներկայացուցիչներն են. նախնաբար ապահով նաեւ անունով նոյն էին: Հետեւարար ելու կուքին տարբերութիւնները աւելի յետագույն գարերու ժառանգութիւն են: Ամէնէն կնճռուով կարծեմ Ատափիսի հարցն է: Թէ ինչ աղերս կայ ասոր եւ թամուղի եւ Ագոնիսի միջեւ, ինքն իրեն առանձին գլուխ մընէ է արդէն առասպելաբննութեան մէջ եւ գժբախտաբար տակաւին թերութէմ կարծիքներու ամենավիճելի նիւթ մը: Հոր շատ մանրամասնութիւններու իջնալ նպատակէ